

ՀԱՋԻՅ ԶԵԴԻ

ՔՐԴԱԿԱՆ «ԴԸՄ-ԴԸՄ» ԷՊՈՍԻ ՀԱՅՅՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Արևմտյան Հայաստանում հատկապես լեռնցի հայերը և քրդերը դարերի ընթացքում եղել են մոտիկ հարևաններ և շատ վայրերում բռնակվել են համատեղ, հաճախ միևնույն ավանում, գյուղում, անվանելով միմյանց քիրվա, դոստ-բարեկամ: Նրանք ապրել են գրեթե տնտեսական նույն պայմաններում, հարստահարվելով թուրքական, պարսկական բռնակալությունների և ներքին շահագործողների կողմից, ամենուրեք ենթարկվելով ազգային հալածանքի:

Նման պայմաններում այդ բախտակից ժողովուրդները բնականաբար պետք է մերձենային, ստեղծեին սերտ կապեր կյանքի, մշակութային և հատկապես բանահյուսության բնագավառներում: Դրա վկայությունն են բազմաթիվ առասպելներ, ավանդույթներ, հեքիաթներ, վիպերգեր, պարերգեր, առածներ, ասացվածքներ և բանահյուսական բազմաթիվ այլ նմուշներ: Դրանք արտահայտել են այդ երկու ժողովուրդների ձգտումները, ակնկալությունները¹: Ուշագրավ է նաև կենցաղի մեջ մտած այն հատկանշական երևույթը, որ թե՛ հայերը և թե՛ քրդերը. բանահյուսական շատ նմուշներ ստեղծել և կատարում են կիսով չափ հայերեն, կիսով չափ քրդերեն: «Մշո աշխարհը» ազգագրական բնույթի հոդվածում կարդում ենք. «Պարերգերու կեսը քրդերեն և ապա մյուս կեսը հայերեն են»²: Եվ որ «Քրդերը և հայերը միևնույն պարերը կխաղան»³: Այս հանգամանքը ինքնըստինքյան վկայում է այն մասին, որ այդ հարևան ժողովուրդները իմացել, տիրապետել են միմյանց լեզուն: Այդպիսի պայմաններում դյուրին է եղել նաև ժողովրդական բանահյուսության նմուշների փոխներթափանցումը: Նմանօրինակ փոխներթա-

փանցման փաստումն են «Դրմ-դրմ» քրդական էպոսի հայերեն տարբերակները, որոնք կատարվել են հայ բանասացների կողմից:

Ըստ մեզ հայտնի աղբյուրների «Դրմ-դրմ» էպոսի մասին հայ գրականության մեջ առաջին հիշատակումը վերաբերում է XX դարի սկզբներին: Էպոսի տարբերակներից մեկի համառոտ բովանդակությունը կրում է «Իմ-դիմ» խորագիրը: Այնտեղ հիշվում է, որ դա «... մի վեպ է, շատ երգվում է, ավելի քան տարածված է և բռնում է Պարսկաստանի քյուրդերի երգերի շարքում նշանավոր տեղ»⁴:

«Դրմ-դրմ»-ի մասին հիշատակություն կա նաև «Քեթի խանում» հետաքրքիր պատմվածքում: Դրա հեղինակը՝ Նուրշուդը, գրում է, որ «Ոգևորիչ է «Դրմ-դրմի» ռազմանվագը: Դա երգում են հարսանիքների ժամանակ»⁵:

Հակոբ Շահպաղյանն իր «Քյուրդո-հայ պատմություն» արժեքավոր աշխատության մեջ զետեղել է «Դրմ-դրմի» մի պատում, որ կըրում է «Միր Զեպիլ-Զեռին (Ոսկեբազուկ իշխանը)» խորագիրը⁶: Շահպաղյանը այն թարգմանել է քրդագետ Ա. Ժաբայի՝ ֆրանսերեն և քերդերեն լեզուներով հրատարակած, քրդական բանահյուսությանը նվիրված հայտնի ժողովածուից: Նա այդ տարբերակը զետեղել է իր գերբում իբրև պատմական իրողություն:

«Դրմ-դրմ» էպոսի հայկական մի այլ տարբերակ զետեղված է հայտնի աղագրագետ Նրվանդ Լալայանի «Աղագրական հանդեսի» 25-րդ հատորում⁷, որը գրի է առնվել 1911 թ. Շատախի Թաղ գյուղում: Այս տարբերակը, որ արձակ է, կրում է «Նան Դրմ-դրմ» խորագիրը և դասվել է հայկական հեքիաթների շարքը: «Այս հեքիաթը,—գրել է Լալայանը,—քրդերեն լին ասում, այլ հայերեն»⁸:

«Դրմ-դրմ» էպոսի հայկական պատումների գրառման գործով ըզրադվել է նաև բանասեր, քրդագետ Բենսեն (Սահակ Մովսիսյանը): Ինչպես ինքն է մեզ հայտնի, գրի է առել դրա մի տարբերակը, որը հետագայում անհետացել է: Բենսեն միաժամանակ զբաղվել է «Դրմ-դրմի» ուսումնասիրությամբ: Նրա արխիվում է գտնվում «Փյունիկյան Աստարտե դիցուհին քրդական «Նան Դրմ-դրմ» էպոսում» անտիպ հոդվածը⁹:

Սողոմոն Տարոնցին և Մկրտիչ Խերանյանը թարգմանել են տվյալ էպոսի՝ մեր կողմից մշակված «Նան Դրմ-դրմ» և «Դրմ-դրմ բերդը» խորագրերով տարբերակները, որոնք հրատարակվել են տարբեր ժողովածուներում¹⁰:

Ահա սրանք են մեզ հայտնի հայերեն լեզվով լույս տեսած այն նյութերը, որոնք առնչվում են «Դրմ-դրմ» էպոսի հետ:

Նրանական թվականներից սկսած բանահյուսական գիտարշավների ժամանակ մենք հանդիպել ենք արևմտահայ գյուղարնակ, տարբեր զբաղմունքների տեր, քրդերեն իմացող մի շարք տարեց հայ բանասացների¹¹։ Դրանցից ոմանք պատմել են նաև «Դրմ-դրմ» էպոսի տարբերակները, ասելով. «հայ լինի հայերեն կպատմենք, քուրդ լինի՝ քրդերեն»։ Մինչ այժմ հայ բանասացներից մենք գրի ենք առել յոթ տարբերակ՝ «Խան Դրմ-դրմ» խորագրով։ Դրանցից չորսը քրդերեն են գրառված. Զեդո Զբրայելյանի, Ամատուր Պողոսյանի, Պետրոս Կանդալյանի և Ռաշո Մուրադյանի կատարմամբ։ Մեկ տարբերակ ասել է Հովսեփ Հովսեփյանը, հայերեն և քրդերեն լեզուներով, արձակը՝ հայերեն, չափածոն՝ քրդերեն։ Նրկու տարբերակ գրի ենք առել Աթո Լադոյանից և Ստեփան Շարոյանից։ Նրանք մեր խնդրանքով ասել են քրդերեն և նույնը հայերեն լեզուներով¹²։

Հայ բանասացներից գրի ենք առել նաև «Դրմ-դրմ» և «Դրմ-դրմ Խան» խորագրերը կրող քրդերեն լեզվով պարերգեր։ Դրանք դասվում են «Շառանի» և «Նզդանշիր» հերոսական բնույթի պարերգերի շարքը։ Կատարման ժամանակ պարող տղամարդիկ բաժանվում են առանձին խմբերի և սառը զենքերը օգտւմ ճոճելով՝ կովի տեսարան են ներկայացնում։ Պարի ընթացքում «հակառակորդ» խմբերի միջև տեղի է ունենում մի հոյակապ մրցույթ, որը ժողովրդի ազատատենչ ոգու գեղեցիկ արտահայտություններից է։

Դրի ենք առել նաև «Դրմ-դրմ» բերդը ուխտ գնացածներից մեկի՝ մասնագիտությամբ հնօրյա քարտաշ, բանասաց Արմենակ Ամրիկյանի հիշողությունները։ Ըստ նրա հաղորդման, իրենց համագյուղացիները՝ ողմեցիք, նույնպես մասնակցել են «Դրմ-դրմ» բերդի ապստամբությանը ընդդեմ Շահ-Աբբասյան բռնակալության և նահատակվել են այդ բերդի պաշտպանության ժամանակ։

«Խան Դրմ-դրմ» էպոսի հայկական պատումները առնչվում են «Սասունցի Դավիթ» էպոսի տարբերակների հետ։ Օրինակ, արևմտահայ բանասացները մեր հարցին, թե՛ էլ ի՞նչ բանահյուսական նմուշներ գիտեն, պատասխանել են, որ ի թիվս այլ նմուշների գիտեն նաև «Սասնա ծռերի» ճյուղերը։ Այս կապակցությամբ հետաքրքիր են նաև «Սասնա ծռերի» տարբերակների հայտնի բանահավաք, կաղեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի մի քանի դիտողությունները։ Այսպես, «Սասնա ծռեր» պատումի բանասաց Մանուկ Հարությունյանի մասին նա գրել է հետևյալը. «Մանուկ բիձայի քրդերեն գիտցածներից հիշենք՝ 1. «Փայալ փաշա», 2. «Ռուստամ և Զալ», 3. «Մամոն և Զինե», 4. «Զամբուլ Ֆրոշ»,

5. «Խան Դրմ-դրմ» (ընդգծումը մերն է —Հ. Զ.), 6. «Սիամանթո Խանդարեն» և այլն, և այլն»¹³; «Սասնա Տավթի խեթաթի» բանասաց Ռաշո Մուրադյանի մասին նա գրել է հետևյալը. «Ռաշոն հայերեն գիտե մի շարք հեթաթներ ու երգեր, քրդերեն՝ «Խան Դրմ-դրմ» (ընդգծումը մերն է —Հ. Զ.), «Մամո և Զինն» և ուրիշ պոեմներ ու երգեր»¹⁴:

«Սասնա ծռերի» հայ բանասացները իմանալով նաև «Խան Դրմ-դրմի» տարբերակները, հայկական էպոսի որոշ դրվագներ բնականաբար փոխանցել են «Խան Դրմ-դրմին»: Մեր գրի առած Աթո Լադոյանի «Խան Դրմ-դրմ» քրդերեն պատումում, ինչպես Դավիթը, Խանոն էլ որբ է և ապրում է հորեղբոր մոտ, որը, ինչպես Դավթի հորեղբայրը, նրա համար պողպատե կոշիկներ է կարել տալիս՝ գառներ արածացնելու համար, Խանոն ևս «լապաստակ, գել, աղվես» իրարից չի տարբերում, խառնում է գառների հետ, բերում տուն:

Բանասաց մոկացի Նախո քեռիի «Դավիթ և Մհեր» տարբերակում ասվել է հետևյալը.

«Խրողեր մեկ պողվրտե սուլ էտու կարել,
Մեկ էլ պողվրտե կոռ էտու շինել,
Էլավ, զԴավիթ էրավ գառնարած:
Դավիթ էլավ, զպողվրտե սուլ խաղավ,
Զպողվրտե կոռ բռնից ձեռ,
Դառներ արեց հեռչեղ, տարավ դաշտ:
Դառներ էթող մընչ դաշտին,
Ընցկուն աղվես կրեր, լպստակ, գել,
էն՝ ախակ-տեսակ շանավարներ,
էրեր, ըլից մընչ գառներուն:
Արեց հեռչեղ, հիրկունի էրեր քաղաք—

.....
Խլսուն Զննով Հովան զնաց մոտ Դավիթ,
Տեսավ՝ ընցկուն ման էկի սարեր,
էն պողվրտե սուլ կտրտվիր ի,
էն պողվրտե կոռ լե մաշվիր ի:
Ասաց—Դավիթ, քո բան ինչպե՞սն ի:
Ասաց—Խրողեր, էն սիվ ուլեր օխնած ին,
էն բող բալակ ուլեր անիծած ին,
էնոր զի շատ կը շարլրին»¹⁵:

Իսկ մեր գրի առած բանասաց Աթո Լադոյանի «Խան Դրմ-դրմ» տարբերակի համանման դրվագում ասվում է հետևյալը.

«Ժամանակին կեղնի մե մարդ, աղպոր տղան կեղնի անուն Խանու կեղնում է տասնին դարեկան: Դրա ապոն (խորխպեր) կերթա խըդ սուլ

գարող, կիտա մի սուլ գարող, կբերի, կիկա: Առավոտ գլի խանոն կհագնեն: Գառներ կթողա, կերթա հանդ: Ինքն էլ ծանոթ չի եղներ, լապըստակուն, աղվիսնուն, գիլանքուն, ինչ բան որ կելի խառնա գառներուն խետ կբերա: Կբերի քոզ կինն: Սուլ կփլե, գմնա սուլե թել:

Ապո գսե,—Ի՞նչ է պատահիր քեզի, սաբախտան սուլ հագար, իրկուն մնաց թել ու էրիս:

Գսա,—Ապո, հիշին ու, ըսօր զիմ հոգի առավ:

Ապո ճըրագ կկայցե կերթա գառներուն տեսութեն, կդիսնա աղվես, ըգա մեջ լապաստակ խառներ է խետ, բերե հավու (նեբս):

Բացի դրանից, նմանօրինակ դրվագներ են նաև առյուծի հետ կապված հատվածները՝ առյուծի «Փայդա» լինելը: «Մասնա ծոբ» էպոսում հիշատակվում է, որ «Փայդա» ընկած առյուծը ճանապարհներ է «կտրել», թույլ չի տալիս, որ մարդիկ գնան ու գան: Դրա պատճառով հացի պակասություն ու թանկություն է ստեղծվում աշխարհում: Մհերը «ճղում» է այդ առյուծի բերանը, սպանում է նրան, որի համար էլ կոչվում է «Առյուծածե Մհեր»¹⁶:

Հայ բանասաց Զեդո Զբրայելյանի «Նան Դըմ-դըմ» տարբերակում նույնպես պատմվում է մի առյուծի մասին, որից մարդիկ վախենում և խուսափում են, իրենց անասուններին այլ ուղղությամբ են տանում: Այն անտառը, ուր առյուծ է հայտնաբերվել, անօգտագործելի է դառնում: Նախրապան Դըմ-դըմը (խանոն) արհամարհելով վտանգը, տավարը տանում է հենց այն անտառը, ուր առյուծն է գտնվում: Այդ ամենի գազանի հետ գոտեմարտի է բռնվում և սպանում է՝ կորցնելով իր մի ձեռքը, որի համար էլ կոչվում է «Նանե կոպ» («Կոնատ խան»):

«Դըմ-դըմի» հայկական պատումներում տեղ են գտել նաև հայ և քուրդ ժողովուրդների հարեանության սերտ կապերը արտացոլող դրվագներ: Բանասաց Հովսեփի Հովսեփյանի «Նանա Դըմ-դըմ» խորագիրը կրող տարբերակի հերոսը՝ Մահմուդը (խանե Ճանգզեդինը), որը «հայ գյուղի հաց է կերել», երախտագիտության զգացումով է օգնում այդ գյուղի բնակիչներին: Նրանցից թալանված ոչխարի հոտը ավազակներից ետ է խլում, բերում, հանձնում է տերերին: Կոյի ժամանակ զրկվում է մի ձեռքից: Հայ գյուղացիները դիմում են շահին, որ նրա կորցրած ձեռքի համար ոսկյա ձեռք պատրաստել տա. «Հայերն,—ասվում է այնտեղ,—պատիվ կունենան շահ-թագավորի մոտ, կգնան էնտեղ, կդիմեն շահին, կասեն.

— էս մարդը էսպես-էսպես ղոշախություն արեց, մեր թալանը դարձրեց: Կդիմենք նրա համար մի ոսկյա ձեռք պատրաստել:

Շահն էլ ելավ, տեսավ, որ ղոշախ մարդ է, դեմքասիրուն մարդ, նրա ձեռքը պատրաստեց և նրա անունը դրեց Զանգզեռին (Ոսկեբազուկ)»:

Բանասաց Ստեփան Շարոյանի «Խանա Դըմ-դըմ» տարբերակում նոր երանգներով է ներկայանում այն դարավոր իրողությունը, ըստ որի դրացի պետականագուրկ քրդերը, մահմեդական կրոնի պատճառով խարվել, հալածվել, ճնշվել ու կոտորածների են ենթարկվել թե՛ թուրք և թե՛ պարսիկ կրոնակից բռնակալների կողմից: Այսպես, Դըմ-դըմ բերդի ապստամբ ջրագուրկ քրդերը, երբ տեսնում են, որ այլևս ի վիճակի չեն դիմադրելու, ստիպված դիմում են Թուրքիայի մահմեդական սուննի դավանանքին հետևող թագավորին, որ նրանց օգնություն ցույց տա, զորք ուղարկի, որպեսզի մահմեդական շիա դավանանքին հետևող պարսիկներից պաշտպանվեն: Թուրքիայի թագավորը խոսքով իր պատրաստակամությունն է հայտնում, սակայն իրականում նենգաբար խաբում է քրդերին: Նա իր զորքին բավականին ուշացած է ուղարկում և բերդի կործանման պատճառը դառնում: «Օսմանցի թագավորը,—ասվում է այդ տարբերակում,—էնքան էր ուշացել, որ կռիվը վերջացավ: Նոր Բադին փաշան զորքով ուղարկեց իրեն օգնության, իսկ Խանոն, երբ իմացավ Բադին փաշան գալիս է ուրանց օգնության, վերցրեց իր տղերք, մշակներ և դիմավորեց Բադին փաշային: Երբոր գնացին հասան, մեկ տեղ նստան: Բադին փաշան ըստեղից մի անխղճություն արեց, դահվալուն սովորեցրեց, որ «դահվի մեջ մհարի (թույն) կգցես, կիտաս Խանոյին և տղաներին և մշակներին»: Ղահվալին պատրաստեց էդ ու տվեց: Արդեն Խանոն էլ, տղերքն էլ, մշակներն էլ ամբողջ մահացան: Բադին փաշան ղահվալուն ասաց.

— Զորս հատ ղահվա էլ կշինես, կպատրաստես, կդնես ոսկու թեփսու մեջ ու կտանես, կերթաս կալա (բերդ), կտաս իրեն կնկան ու հարսներու, էրիբ հարսին ու մորն էլ, որ էտոնք էլ մահանան: Մենք արխային գնանք լցվենք կալի մեջ»:

Սակայն հակառակ թուրք փաշայի որոգայթին, Դըմ-դըմ բերդի գերավումը հեշտությամբ տեղի չի ունենում: Բանասացը այնուհետև ներկայացնում է քուրդ ազատատենչ կնոջ ոչ միայն անձնազոհությունը, որը գրեթե բոլոր տարբերակներում երևան է եկել, այլև նրա բնատուր խելքը՝ առողջ դատողությունը, հեռատեսությունը: Նա հակառակ սուլնի, հավատակից թուրքերի նկատմամբ իր ամուսնու դուրսահավատության, կասկածանքով է վերաբերվում փաշայի նախօրոք ուղարկած սուրճին: Այդ կինը երբ նկատում է, որ ամուսինը, որդիներն ու մը-

շակաները ուշացան, սուրճը նախ առլիս է կատարին: Կատարի սատկելը հաստատում է նրա կասկածները:

«Կինն արդեն ինքը գլխի ընկավ, որ Խանոյին, տղերքներուն և մշակներուն ամբողջովին ղեղել է, սպանել: Արդեն կինը կալի դուռը գոցեց: Մեկ էլ տեսավ, որ Բադին փաշան ուր զորքով եկավ: Կինը նայեց ոչ Խանո կա, ոչ տղեք կան, ոչ մշակներ կան, մեկ էլ շեկավա՞: Դրանցից հետո, ինչպես էպոսի մյուս տարբերակներում է պատմվում պարսկական զորքի մասին, թուրքական զորքն էլ Խանոյի կնոջ առաջարկով դալիս լցվում է բերդի բակը և այդ ժամանակ կինը «վերևում նարգիլի կրակ գցեց ջարդխանի մեջ»: Բերդում պայթյուն է առաջանում, որից հետո ինքը, ներս խուժած թուրքական ողջ զորքը, Բադին փաշան՝ իր շքախմբով, ամբողջովին կրակի ճարակ են դառնում:

Այսպիսով, ըստ Ստեփան Շարոյանի պատումի, քրդերի ազգային ազատագրությանը դեմ են և նրանց արդարացի պայքարը ճնշում են ոչ միայն մահմեդական շիի դավանանքի պարսիկները, այլև դավանակից սուննի թուրքերը:

«Դրմ-դրմի» տարբերակները տեղայնացվելով՝ հայկական միջավայրում ձուլվել են հայկական բանահյուսության նմուշների հետ, արտացոլելով նաև հայ ժողովրդի մտորումները, խոհերը, ձգտումները, պայքարը օտար բռնակալների դեմ: Այսպես, Երևանում բնակվող, այժմ հանգուցյալ Վարդան Վարդանյանը, որ շատ շնորհաշատ բանասաց էր, տիրապետում էր մի քանի լեզուների՝ հայերեն, քրդերեն, թուրքերեն¹⁷, գիտեր «Խան Դրմ-դրմ» էպոսի երեք ծավալուն և իրար հետ շաղկապված ճյուղերը, բայց ցավոք, հիվանդության պատճառով ի վիճակի չեղավ այն մեզ լրիվ ներկայացնել: Միայն կարողացավ հայտնել տրվյալ ստեղծագործության համառոտ բովանդակությունը և էպոսի հետ կապված մի պարերգ: «Խան Դրմ-դրմի» այդ ճյուղը արտացոլում է Շահ-Աբասի օրոք, XVI դարի վերջերում տեղի ունեցած Արևելյան Հայաստանի հայ բնակչության տեղահանումը դեպի Պարսկաստան, որը հայ ժողովրդի պատմության ողբերգական շրջաններից մեկն է¹⁸:

Բանասաց Վարդան Վարդանյանի «Խան Դրմ-դրմ» էպոսի այդ ճյուղի Դրմ-դրմ անունով հերոսը հանդես է գալիս որպես հայ գաղթական: Նրա հոր անունն է Մարտիրոս, մորը՝ Մարան: Հայերի գաղթի ժամանակ նա կորցնում է իր ծնողներին, որքանում է: Շահ Աբասը նրան վերցնում է իր մոտ: Այնուհետև, տեսնելով նրա արժանիքները՝ համարձակ, անվախ լինելը, նրան որդեգրում է:

Դրմ-դրմը, որի ականջին կախված է լինում գերության պիտակը,

իրբի Շահ-Աբասի զորքի քաշարի զինվոր, թշնամիների դեմ տանում է մի շարք փայլուն հաղթանակներ. «Աֆղանստանը, Հաշարստանը, Արաբստանը ենթարկում է Պարսկաստանին»: Մի թեժ կռվի ժամանակ Դրմ-դրմը կորցնում է իր ձախ ձեռքը: Շահ-Աբասը գնահատելով նրա աչքի բնկնող ծառայությունները, կարգադրում է նրա համար ոսկյա ձեռք պատրաստել: Դրանից հետո նրան կոչում են Դրմ-դրմ խան: Հետագայում նա փրկում է գերության մեջ գտնվող իր ծնողներին: Դրանից հետո նրա հայրը՝ Մարտիրոսը, կրում է Միր Մարտիրոս տիտղոսը:

Հետագայում Դրմ-դրմ խանը սիրահարվում է Շահ-Աբասի եղբոր՝ Մահմուդ Մերգինի աղջկան՝ Հաջիջային: Շահ-Աբասը չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ հայ գերին կարող է դառնալ իր տոհմիկ ցեղի փեսան: Դրա փոխարեն համաձայնվում է կատարել Դրմ-դրմի մյուս բոլոր պահանջները, միայն թե նա ձեռք քաշի իր այդ մտադրությունից:

Մերժումից խիստ վիրավորված Դրմ-դրմ խանը դիմում է խորամանկության: Շահ-Աբասից խնդրում է երկու եղանակաչվի շափ հողամաս, որպեսզի իր համար տուն-տեղ կառուցի: Համաձայնություն ստանալուց հետո նա այդ եղանակի կաշիները սրեմի է վերածում, դրանով շափում է մեծ տարածություն, ուր կառուցել է տալիս մի բերդ: Բերդի կառուցումից հետո նրա կողմնակիցների և Շահ-Աբասի զորքի միջև տեղի է ունենում կատաղի կռիվ: Շահ-Աբասի զինվորները չեն կարողանում բերդը գրավել: Այդ ժամանակ Դրմ-դրմ խանին մոտիկ՝ Մուրադանունով մի անձնավորություն դավաճանում է նրան, բերդից փախչում և շահին հայտնում է բերդի ջրի ակունքի տեղը: Ջրի ակունքը փակելուց հետո միայն շահի զինվորներին հաջողվում է բերդը գրավել:

Դժվար չէ նկատել Վ. Վարդանյանի և քուրդ բանասացների տարբերակների նմանությունը և տարբերությունը: Վ. Վարդանյանի տարբերակում փաստորեն միաձուլվել են «հայ ժողովրդի պատմության մեջ իր շափերով նախընթացը չունեցող»¹⁹ այդ մեծ գաղթը և նույն շրջանում տեղի ունեցող քրդերի հայտնի ապստամբությունը: Այս երկու խոշոր իրադարձությունների միասնությունը դիտվում է որպես երկու հարևան ժողովուրդների միասնական բողոքի ցասման ու պայքարի արտահայտություն՝ ընդդեմ պարսկական տիրապետության:

Ահա թե ինչու «Դրմ-դրմի» և «խան Դրմ-դրմի» քրդերեն տարբերակները այդքան հարազատ են հայ բանասացներին և այդքան լայն տարածում են գտել հնագույն հարևան ու բարեկամ հայ ժողովրդի լայն շրջաններում ևս:

АРМЯНСКИЕ ВАРИАНТЫ КУРДСКОГО ЭПОСА «ДЫМ-ДЫМ»

Резюме

Распространенность произведений курдского устного народного творчества среди армян одно из примечательных явлений курдско-армянских историко-культурных взаимосвязей. В статье обстоятельно анализируются варианты курдского эпоса «Дым-Дым», популярных в западноармянской среде, вскрыты особенности этих вариантов, локализация их идейно-художественных черт.

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Տե՛ս Գ. Սրվանձադյան, Երևան հ. 1, Ե., 1978, Ս. Հայկունի, էմիեյան ազգագրական ժողովածու, հ. Ե., Հայ-բրդական վեպ, Մոսկվա-Վաղարշապատ, 1904: Նույնի էմիեյան ազգագրական ժողովածու, հ. 2, Մոսկվա-Վաղարշապատ, 1906, Ալեքո, Բալու, Իր սովորույթները, կրթական իմացական վիճակը և բարբառը, Փահիրե, 1930, 2. Ջեղի, Հայ և բուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ, Ե., 1965: Ս. Լիսիցյան, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван և ուրիշներ:
2. Տե՛ս «Լուսա» ամսագիր, գիրք Բ, Թիֆլիս, 1898, էջ 173:
3. Նույն տեղում, էջ 160:
4. Ե. Ֆանգեյան, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 293:
5. «Արօր» հանդես, Թիֆլիս, 1910, № 6—7, էջ 27:
6. 2. Շահապադյան, Քյուրդոս հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 65—68:
7. Ե. Լալայան, Ազգագրական հանդես, հ. 25, Թիֆլիս, 1914, էջ 154—160:
8. Նույն տեղում, էջ 154:
9. «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 10, Ե., 1967, էջ 551:
10. «Սովետական բուրդ բանաստեղծներ», ժողովածու, կազմեց Զ. Զալիլը, Ե., 1953, էջ 56—65, 2. Ջեղի, Քրդական ժողովրդական վիպերգեր, Ե., 1960, էջ 34—60:
11. Տե՛ս 2. Ջեղի և Ա. Ավդալ, Քրդական ֆուկլոր (ժողովածու, բրդերեն), Ե., 1936:
12. Տե՛ս մեր անձնական արխիվի անտիպ պատումները:
13. «Սասնա ծռեր», Երևան, 1936, էջ 603:
14. Նույն տեղում, էջ 756:
15. «Սասնա ծռեր», խմբագրեց պրոֆ. դր. Մանուկ Աբեղյանը, աշխատակցությամբ Կարապետ Մ. Օհանջանյանի, Ե., 1936, էջ 11—12:
16. «Սասնա ծռեր», աշխատակցությամբ Սարգիս Հարությունյանի, Ե., 1977, էջ 56—60:
17. Տե՛ս 2. Ջեղի և Ա. Ավդալ, Քրդական ֆուկլոր (բրդերեն), Ե., էջ 167—176:
18. «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Ե., 1972, էջ 93:
19. Նույն տեղում, էջ 78: